



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԿԱՐԶԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱԿԱՐ**

«07» 07 2021 թ.

ք. Երևան, Տնիցյան փող., 44, հեռ.՝ (+374 11) 518 401,
Էլ. փոստ՝ kentrone@yerevan.am

№ 465-Ա

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության առաջատար մասնագետ Հ.Մարգարյանի կողմից 03.09.2020թ. կազմված 035998 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի վարչական իրավախախտման վերաբերյալ գործեր քննելու վարչական տույժ նշանակելու համար նյութեր նախապատրաստող հանձնաժողովը /այսուհետ՝ Հանձնաժողով/, 07.07.2021թ. տեղի ունեցած նիստի ընթացքում քննեց 03.09.2020 կազմված թիվ 035998 արձանագրության մեջ նշված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, որի համաձայն՝ ԱԶ Գեղամ Թևանյանի կողմից 21.08.2020 թվականին Երևան քաղաքի Մ.Խորենացի 8 թիվ 1/4 հասցեի դիմաց ոչ սահմանված տեղում մեկ տարվա ընթացքում կրկին իրականացվել է բացօթյա /գյուղատնտեսական արտադրանքի/ առևտուր:

Գործի քննության ընթացքում Հանձնաժողովը, էական փաստական և իրավաբանական հանգամանքների հետազոտման արդյունքում պարզեց, որ ԱԶ Գեղամ Թևանյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգրք/ 162-րդ հոդվածի 1-ին մասով /ոչ սահմանված տեղերում առևտուր անելը/ նախատեսված վարչական իրավախախտումը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքները և գործի քննության ընթացքում պարզված հանգամանքները, ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, 162-րդ հոդվածի 1-ին մասով,

219.1-րդ և 281-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 07.05.2010թ. «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» թիվ 96-Ն որոշմամբ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ա/Ձ Գեղամ Թևանյանին Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 80.000 /ութուն հազար/ ՀՀ դրամի չափով:

2. Առաջարկել Ա/Ձ Գեղամ Թևանյանին միջոցներ ձեռնարկել իրավախախտման պատճառները և պայմանները վերացնելու ուղղությամբ և Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն 80.000 /ութուն հազար/ ՀՀ դրամ տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ վճարում կատարելով կենտրոնական գանձապետարանի 900015213110 հաշվեհամարին: Օրենքով սահմանված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում այն կարող է բռնագանձվել ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

3. Կայացված որոշումը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով կուղարկվի Ա/Ձ Գեղամ Թևանյանին:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կամ դատական կարգով /ՀՀ վարչական դատարան/ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

  ԳԵՂԱՄ ԴՈՂՈՍՅԱՆ